«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ
ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

"MATENADARAN"
MESROP MASHTOTS
INSTITUTE OFANCIENT
MANUSCRIPTS

Երևան, Մաշտոցի պող. 53, ☏51-30-00

Yerevan, Mashtots Av. 53, ☏51-30-00
Email: contact@matenadaran.am

ք. Երևան

2024թ փետրվարի 29

0-159

Ա/Ձ ԼԵՎՈՆ ՏԻԳՐԱՆԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ

(Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արամի 64)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հիմք ընդունելով «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազետական ինստիտուտ» Հիմնադրամի և Ձեր միջև կնքված «ՄԱՏ-ԳՀԾՁԲ-02/24» ծածկագրով հակահրդեհային սարքերի վերանորոգման և պահպանման ծառայությունների (CO2 պարունակող) ձեռքբերման պայմանագրի 2-րդ կետի 2.1.3 ենթակետը՝ ստորև ներկայացնում եմ նշված պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ որոշումը:

Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը (տվյալ դեպքում՝ Ա/Ձ ԼԵՎՈՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ-ն) ստանձնում է հակահրդեհային սարքերի վերանորոգման և պահպանման ծառայությունների (CO2 պարունակող) մատուցման պարտավորությունը՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 Հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների: Ծառայությունների մատուցման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2024թ (տվյալ դեպքում՝ պայմանագիրն ուժի մեջ է մտել 14.02.2024թ.): Համաձայն պայմանագրի Հավելված N 1՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի՝ Ծառայություն մատուցող կազմակերպությունը պարտավոր է ծառայությունն իրականացնել ըստ «Ծառայության ցանկը և ժամանակացույցը» աղյուսակի: Աղյուսակում հստակ նշված է, թե Կատարողը ինչ ժամանակահատվածում է մատուցելու տվյալ ծառայությունը: Ձեր կողմից խախտվել է աղյուսակի 1-5 կետերում նշված ծառայությունների շաբաթական մատուցումը:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱՁ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ չիրականացնելով պայմանագրով նախատեսված ծառայության մատուցումը, ուստի «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» Հիմնադրամը՝ հիմք ընդունելով վերը նշված իրավական հիմքերը, միակողմանի հրաժարվում է 14.02.2024թ. ԱՁ-ի հետ կնքված «ՄԱՏ-ԳՀԾՁԲ-02/24» ծածկագրով ծառայությունների մատուցման պայմանագրից՝ համարելով այն ամբողջությամբ լուծված:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել պայմանագրի և որակավորման ապահովման գումարը:

Ընդ որում, «ՄԱՏ-ԳՀԾՁԲ-02/24» ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.14 կետի համաձայն՝ եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը (3 աշխատանքային օր) լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում ԱՁ-ի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն ԱՁ-ին սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները Հայէկոնոմբանկ ՓԲԸ 163038100547 հաշվեհամարին փոխանցելու համար:

Միաժամանակ հայտնում ենք, որ սույն ծանուցմամբ պատվիրատուն ապահովել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված պահանջի կատարումը:

Տնօրեն՝ Ա. Խզմալյան